ԶԱՐԳԱՑԱԾ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ՆԱԶԱՐՅԱՆ

1977 թ. հոկտեմբերի 7-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի 9-րդ գումարման 7-րդ արտահերթ նստաշրջանը ընդունեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության նոր սահմանադրությունը (հիմնական օրենքը)։ ՍՍՀՄ Գերագույն սովետն ընդունեց նաև դեկլարացիա ՍՍՀՄ սահմանադրությունն ընդունելու և հայտարարելու մասին, ՍՍՀՄ սահմանադրության ընդունման օրը համաժողովրդական տոն հայտարարելու մասին, օրենք ՍՍՀՄ սահմանադրությունը գործողության մեջ դնելու կարգի մասին։ «ՍՍՀՄ սահմանադրությունը վավերագրում է դեպի կոմունիզմ մեր առաջընթացի պատմական նոր բնագիծ՝ զարգացած սոցիալիստական հասարակության կառուցումը։ Նա հարստացնում է համաշխարհային սոցիալիզմի փորձի ընդհանուր գանձարանը և հզոր խթան կծառայի ազատության, դեմոկրատիայի, կայուն խաղաղության ու սոցիալական առաջադիմության համար ամբողջ աշխարհի աշխատավորների պայքարում»[1]։

Սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է, որն օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով, արտահայտում է տիրապետող դասակարգի կամքը և դրան համապատասխան սահմանում է տվյալ երկրի տնտեսական, քաղաքական և իրավական սիստեմի հիմքերը[2]։

Բուրժուազիայի գաղափարախոսները միշտ էլ ժխտել են սահմանադրության դասակարգային էությունը։ Նրանք փորձում են գործն այնպես պատկերել, թե սահմանադրությունը սոսկ իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթուղթ է և ոչ ավելին[3]։ Այսպես, ժամանակակից անգլիական պետականագետներ Ուեյդը և Ֆիլիպսը գրում են, որ «սահմանադրության տակ, սովորաբար, հասկանում են հատուկ իրավաբանական իմաստով օժտված փաստաթուղթ, որի մեջ սահմանված են պետության կառավարման մարմինների կազմակերպական հիմքերը, ինչպես նաև ֆունկցիաները և ձևակերպված են այդ մարմինների գործունեությունը սահմանող սկզբունքները»[4]։

Դրան հակառակ, մարքսիզմի դասականները բացահայտել են բուրժուական սահմանադրությունների իսկական դասակարգային էությունը։ Նրանք ցույց են տվել, որ սահմանադրական ֆրազների ետևում միշտ էլ թաքնված է բուրժուազիայի պետական, դասակարգային շահը։ Անդրադառնալով բուրժուական սահմանադրությունների այդ կողմին, Կ. Մարքսը իր «Լուի Բոնապարտի Բրյու-

---

[1] «Правда», 9.X.1977.

[2] «Большая советская энциклопедия», т. 13, стр. 51 *(սահմանադրություն բառը ծագել է լատիներեն* constitutio *բառից, որը նշանակում է սահմանում, կառուցվածք)։*

[3] Г. Еллинек, Общее учение о государстве, СПб, 1907; Уэйд и Филлипс, Конституционное право Франции, М., 1959; Т. Маунц, Государственное право Германии (ФРГ и ГДР), М., 1959.

[4] Уэйд и Филлипс, *նշվ. աշխ., էջ 89։*

մերի 18-ը» աշխատության մեջ գրում է, որ «Սահմանադրության յուրաքանչյուր պարագրաֆ իր մեջ պարունակում է իր սեփական հակադրությունը, իր սեփական ստորին և վերին պալատները— ազատություն՝ ընդհանուր ֆրազով, ազատության վերացում՝ վերապահությամբ»[5]։

Բուրժուական սահմանադրությունների նման երկիմաստ բնույթը մերկացվել է նաև Վ. Ի. Լենինի կողմից։ «Չկա ոչ մի թեկուզ ամենադեմոկրատական պետություն,— գրել է Վ. Ի. Լենինը,— որտեղ սահմանադրությունների մեջ չլինեին սողանցքներ կամ վերապահություններ, որոնք բուրժուազիայի համար ապահովում են բանվորների դեմ զորքեր շարժելու, պատերազմական դրություն մտցնելու և այլնի հնարավորությունը...»[6]։

Սահմանադրության մյուս բնորոշ կողմն այն է, որ նա արտացոլում է դասակարգային ուժերի փոխհարաբերությունը տվյալ ժամանակաշրջանում։ «Սահմանադրության էությունն այն է,— գրել է Վ. Ի. Լենինը,— որ պետության հիմնական օրենքներն առհասարակ և այն օրենքները, որ վերաբերում են ընտրական իրավունքին ներկայացուցչական հիմնարկների համար, նրանց իրավասությանը և այլն, արտահայտում են ուժերի իրական հարաբերությունը դասակարգային պայքարում»[7]։

Աշխարհում առաջին սոցիալիստական պետությունը իր առաջին՝ ՌՍՖՍՀ 1918 թ. սահմանադրությունում ընդգծեց Ռուսաստանում կենսագործվող պետական իշխանության և նրա հիմնական օրենքի դասակարգային էությունը։ «Սովետական սահմանադրությունը,— գրել է Վ. Ի. Լենինը,— որը սովետների նման ստեղծվել է հեղափոխական պայքարի ժամանակաշրջանում, առաջին սահմանադրությունն է, որն աշխատավորների իշխանությունը հռչակել է որպես պետական իշխանություն, որն իշխանությունից հեռացրել է շահագործողներին՝ նոր կյանքի կառուցման հակառակորդներին։ Մյուս պետությունների սահմանադրություններից նրա այդ գլխավոր տարբերությունն էլ հենց կապիտալի դեմ հաղթանակելու գրավականն է»[8]։

ՍՄԿԿ Կենտկոմի 1977 թ. մայիսյան պլենումում «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմանադրության նախագծի մասին» տված իր զեկուցման մեջ Լ. Ի. Բրեժնևը նշեց, որ 1918 թ. ՌՍՖՍՀ սահմանադրությունը «վավերագրեց Հոկտեմբերի նվաճումները և սահմանեց սովետական պետության՝ որպես պրոլետարիատի դիկտատուրայի պետության դասակարգային էությունը»[9]։ ՌՍՖՍՀ 1918 թ. սահմանադրությունը օրինակ ծառայեց մյուս հանրապետությունների սահմանադրությունների, այդ թվում նաև 1922 թ. փետրվարի 3-ին սովետների համահայաստանյան I համագումարի կողմից ընդունված ՀՍՍՀ սահմանադրության համար։

ՍՍՀՄ 1924 թ. սահմանադրությունը ամբողջովին նվիրված էր աշխարհում առաջին բազմազգ սոցիալիստական միութենական պետության ստեղծմանը։ Այն հոդվածներ չէր պարունակում մեր երկրի հասարակական-քաղաքական և տնտեսական կառուցվածքի հիմունքների մասին։ Այդ հարցերը շարունակվում էին կարգավորվել հանրապետական սահմանադրություններում։

---

5 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, Երևան, 1972, էջ 557։
6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 306։
7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 415։
8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 694։
9 «Սովետական Հայաստան», 5.VI.1977։

1936 թ. դեկտեմբերի 5-ին ՍՍՀՄ սովետների VIII արտակարգ համագումարն ընդունեց ՍՍՀՄ նոր սահմանադրությունը, որն «օրենսդրականորեն վավերագրեց ՍՍՀՄ-ում սոցիալիստական հասարակական հարաբերությունների հաղթանակը և դրան համապատասխանեցրեց իշխանության ու կառավարման մարմինների ողջ սիստեմը, ինչպես նաև ընտրությունների կարգը»[10]։

Սոցիալիզմի հիմքերի կառուցման ավարտից անցել է 40 տարի։ Մեր երկրի հասարակական, տնտեսական և քաղաքական կյանքում այդ տարիներին կատարվել են սկզբունքային նշանակություն ունեցող տեղաշարժեր, որոնք անհրաժեշտություն դարձրին նոր սահմանադրության ընդունումը։ «Երբ ընդունվում էր 1936 թվականի սահմանադրությունը,— ասաց Լ. Ի. Բրեժնևը,— մեզ մոտ ըստ էության նոր էր ավարտվել սոցիալիզմի հիմքերի ստեղծումը։ Բոլորովին երիտասարդ էր և դեռ չէր ամրապնդվել կոլտնտեսային կարգը։ Ժողովրդական տնտեսության տեխնիկական մակարդակը դեռ հեռու էր առավել զարգացած ինդուստրիալ երկրների մակարդակից։ Կյանքի տարբեր բնագավառներում շարունակում էր զգացվել նախահեղափոխական ժամանակների ժառանգությունը»[11]։ Մինչդեռ այժմ «Անճանաչելիորեն փոխվել է երկրի էկոնոմիկան։ Նրանում անբաժանելիորեն տիրապետում է սոցիալիստական սեփականությունը։ Ստեղծվել և հաջողությամբ գործում է ժողովրդատնտեսական միասնական, հզոր օրգանիզմ։ Այն զարգանում է գիտատեխնիկական հեղափոխությունը սոցիալիստական կարգերի առավելությունների հետ զուգորդելու հիման վրա»[12]։ Այդ տեղաշարժերն իրենց որոշիչ ազդեցությունն են թողել մեր հասարակության դասակարգային կառուցվածքի վրա։ «Փոխվել է նաև հասարակության սոցիալական դեմքը։ Այսօր մեր բանվոր դասակարգը կազմում է երկրի բնակչության երկու երրորդը։ Դրանք տասնյակ միլիոնավոր կրթված, տեխնիկապես գրագետ, քաղաքականապես հասուն մարդիկ են։ Նրանց աշխատանքն ավելի ու ավելի է մոտենում ինժեներատեխնիկական աշխատողների աշխատանքին։ Զգալիորեն աճել է բանվորների հասարակական ակտիվությունը, նրանց մասնակցությունը պետության կառավարմանը»[13]։

Փոխվել է նաև գյուղացիության սոցիալական դեմքը։ «Ներկայիս կոլտնտեսականը ծնվել ու մեծացել է կոլտնտեսությունում, նրա հոգեբանությունը ձևավորվել է արդեն սոցիալիստական հիմքի վրա։ Նա կառավարում է ժամանակակից տեխնիկան։ Իսկ նրա կրթական մակարդակը, նրա ապրելակերպը շատ քիչ է տարբերվում քաղաքայինից»[14]։

Մեր երկրում ստեղծվել է ժողովրդական սոցիալիստական մտավորականություն, որի տեսակարար կշիռը մեծանում է հասարակության կյանքում, կոմունիստական շինարարության ասպարեզում գիտության դերի առաջընթացի համեմատ։

Մեր երկրում ոչ միայն իրավաբանական, այլև փաստական է դարձել ազգերի հավասարությունը։ «Մեր բոլոր հանրապետությունները,— ասաց Լ. Ի. Բրեժնևը,— այդ թվում նաև այն հանրապետությունները, որոնք նախկինում ետ էին մնում տնտեսական և կուլտուրական տեսակետից, այժմ հասել

10 Նույն տեղում։
11 Նույն տեղում։
12 Նույն տեղում։
13 Նույն տեղում։
14 Նույն տեղում։

են զարգացման բարձր մակարդակի։ Միաժամանակ, յուրաքանչյուր հանրապետության էկոնոմիկան դարձել է ժողովրդատնտեսական միասնական կոմպլեքսի անխզելի մասը»[15]։

Այդ բոլորը հանգեցրել է այն բանին, որ մեր երկրում «Առաջացել է մարդկանց պատմական նոր ընդհանրություն՝ սովետական ժողովուրդը»[16]։ Մյուս կողմից, սովետական սոցիալիստական պետությունը պրոլետարիատի դիկտատուրայի պետությունից վերածվել է համաժողովրդական պետության, փոխվել և հարստացել են նրա ֆունկցիաները։ Մեր երկրում կառուցված զարգացած սոցիալիստական հասարակության քաղաքական սիստեմում բարձրացել է նրա ղեկավար և ուղղություն ցույց տվող ուժի՝ Սովետական Միության կոմունիստական կուսակցության դերը։

Աշխարհի սոցիալ-քաղաքական դեմքի փոփոխման հետ միասին բարձրացել է մեր երկրի միջազգային նշանակությունը։

Բացի այդ, 1936 թ. ՍՍՀՄ սահմանադրության ընդունումից հետո զգալիորեն նորացվել և կատարելագործվել էր սովետական օրենսդրությունը։ Այդ հանգամանքը ևս անհրաժեշտորեն պահանջում էր երկրի նոր հիմնական օրենքի ընդունում, որը կայունություն ու ներդաշնակություն կմտցներ զարգացած սոցիալիստական հասարակության կյանքում ծավալվող հարաբերությունների ամբողջ կոմպլեքսի իրավական կարգավորման միասնական մեխանիզմի մեջ։

Այս բոլորը անհրաժեշտություն դարձրին, որպեսզի ընդունվի երկրի նոր հիմնական օրենք և նրանում արտացոլվեն վերը նշված արմատական տեղաշարժերը։

Հաշվի առնելով այս հանգամանքները և ի կատարումն ՍՄԿԿ Կենտկոմի ցուցումների, ՍՍՀՄ Գերագույն սովետը 1962 թ. ապրիլի 25-ին ստեղծեց սահմանադրական հանձնաժողով՝ ՍՍՀՄ նոր սահմանադրության տեքստը նախապատրաստելու համար։ 1977 թ. մայիսի 24-ին ՍՄԿԿ Կենտկոմի պլենումը, լսելով Սահմանադրական հանձնաժողովի նախագահ Լ. Ի. Բրեժնևի զեկուցումը ՍՍՀՄ սահմանադրության նախագծի մասին, որոշեց ընդհանուր առմամբ հավանություն տալ հանձնաժողովի ներկայացրած նախագծին և առաջարկեց ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը՝ այն դնելու համաժողովրդական քննարկման։ 1977 թ. մայիսի 30-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը հիմնականում հավանություն տվեց սահմանադրության նախագծին։ 1977 թ. հունիսի 4-ին նախագիծը հրապարակվեց մամուլում՝ համաժողովրդական քննարկման համար և որոշվեց 1977 թ. հոկտեմբերին հրավիրել ՍՍՀՄ Գերագույն սովետի արտահերթ նստաշրջան՝ ՍՍՀՄ սահմանադրության նախագիծը վերջնականապես քննարկելու և ընդունելու համար։

Միլիոնավոր սովետական մարդիկ մեծ խանդավառությամբ մասնակցեցին երկրի հիմնական օրենքի համաժողովրդական քննարկմանը։ Բավական է ասել, որ միայն մեկ ամսվա ընթացքում Հայկական ՍՍՀ-ում սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկմանը մասնակցել է 230.577 մարդ, ելույթ է ունեցել 17.205 հոգի։ Նախագծի վերաբերյալ ժողովներում արվել է 335 առաջարկություն[17]։ Իսկ ամբողջ երկրի մասշտաբով «քննարկմանն

15 Նույն տեղում։

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում, 8.VII.1977։

ընդամենը մասնակցեց ավելի քան հարյուր քառասուն միլիոն մարդ, այսինքն՝ մեր երկրի չափահաս բնակչության ավելի քան չորս հինգերորդը»[18]: Սահմանադրության նախագծի քննարկումը տեղի է ունեցել աշխատավորների մոտավորապես մեկուկես միլիոն ժողովներում։ «Տեղի են ունեցել ավելի քան չորս հարյուր հիսուն հազար դոնբաց կուսակցական ժողովներ, որտեղ ելույթ է ունեցել ավելի քան երեք միլիոն մարդ։ Նախագիծը քննարկվել է բոլոր սովետների կողմից՝ սկսած գյուղական սովետներից և վերջացրած միութենական հանրապետությունների գերագույն սովետներով, այսինքն՝ մեր ամբողջ ժողովուրդը ներկայացնող ավելի քան երկու միլիոն դեպուտատների կողմից»[19]։ Նախագծի վերաբերյալ աշխատավորների կողմից արվել են ավելի քան 400 հազար առաջարկություններ, որոնց զգալի մասն արտացոլվեցին նախագծի 110 հոդվածներում։ «Համաժողովրդական քննարկման գլխավոր քաղաքական արդյունքը,— ասաց Լ. Ի. Բրեժնևը,— այն է, որ սովետական մարդիկ ասացին՝ այո, սա այն հիմնական օրենքն է, որին մենք սպասում էինք»[20]։

ՍՍՀՄ սահմանադրությունը բաղկացած է ներածությունից և 174 հոդվածներից։ Այն ունի 9 բաժին, որոնցից առաջին յոթն իրենց հերթին բաղկացած են 21 գլուխներից։

Ներածությունում, որը նորույթ է 1936 թ. ՍՍՀՄ սահմանադրության համեմատությամբ[21], նկարագրված է սովետական պետության ստեղծման պրոցեսը, բնութագրված են պրոլետարիատի դիկտատուրայի իրականացրած այն խոշոր միջոցառումները, որոնց հետևանքով մեր երկրում մեկընդմիշտ վերջ դրվեց մարդու կողմից մարդու շահագործմանը, դասակարգային հակամարտություններին և ազգային թշնամանքին, հաստատվեց արտադրության միջոցների հանրային սեփականություն, իսկական դեմոկրատիա աշխատավորների համար։

Ներածության մեջ տրված է մեր երկրում ձևավորված զարգացած սոցիալիստական հասարակության ծավալուն բնութագիրը։ «Դա մի հասարակություն է, որտեղ ստեղծված են հզոր արտադրողական ուժեր, առաջավոր գիտություն և կուլտուրա, որտեղ մշտապես աճում է ժողովրդի բարեկեցությունը, ավելի ու ավելի բարենպաստ պայմաններ են ստեղծվում անհատի բազմակողմանի զարգացման համար։

Դա սոցիալիստական հասուն հասարակական հարաբերությունների հասարակություն է, որտեղ բոլոր դասակարգերի և սոցիալական խավերի մերձեցման, բոլոր ազգերի և ազգությունների իրավաբանական ու փաստական հավասարության, նրանց եղբայրական համագործակցության հիման վրա կազմավորվել է մարդկանց պատմական նոր ընդհանրություն՝ սովետական ժողովուրդ։

---

18 Նույն տեղում, 5.X.1977։

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում։

21 ՌՍՖՍՀ 1918 թ. սահմանադրությունում նման ներածական բաժնի դեր էր կատարում «Աշխատավոր և շահագործվող ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», իսկ 1924 թ. սահմանադրությունում՝ «ՍՍՀՄ կազմավորման մասին դեկլարացիան»։

Դա հայրենասեր և ինտերնացիոնալիստ աշխատավորների բարձր կազմակերպվածության, գաղափարայնության և գիտակցականության հասարակություն է։

Դա խտկական դեմոկրատիայի հասարակություն է, որի քաղաքական սիստեմն ապահովում է բոլոր հասարակական գործերի արդյունավետ կառավարումը, աշխատավորների ավելի ու ավելի ակտիվ մասնակցությունը պետական կյանքին, քաղաքացիների ռեալ իրավունքների և ազատությունների զուգակցումը նրանց պարտականությունների և հասարակության հանդեպ նրանց պատասխանատվության հետ»։

Սահմանադրության այս բաժնում նշվում է սովետական պետության բարձրագույն նպատակը՝ անդասակարգ կոմունիստական հասարակարգի կառուցումը։ Որպես այդ նպատակին հասնելու գլխավոր խնդիրներ նշվում են կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը, սոցիալիստական հասարակական հարաբերությունների կատարելագործումը և դրանց վերափոխումը կոմունիստական հարաբերությունների, կոմունիստական հասարակության մարդու դաստիարակումը, աշխատավորների կյանքի նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացումը, երկրի անվտանգության ապահովումը, խաղաղության ամրապնդմանն ու միջազգային համագործակցության զարգացմանն աջակցելը։

ՍՍՀՄ սահմանադրության առաջին բաժնում ամրապնդված են ժողովրդի իշխանությունը և այդ իշխանության քաղաքական, տնտեսական ու սոցիալական հիմքերը։

Սահմանադրությունն ամենից առաջ սահմանում է սովետական ժողովրդի լիիշխանությունը, որն արտացոլված է ՍՍՀՄ նոր բնորոշման մեջ։ Սահմանադրության առաջին հոդվածում կարդում ենք. «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը համաժողովրդական սոցիալիստական պետություն է, որն արտահայտում է երկրի բանվորների, գյուղացիների և մտավորականության, բոլոր ազգերի և ազգությունների աշխատավորների կամքն ու շահերը»։ Ժողովրդաիշխանության սկզբունքը առավել որոշակի է ամրապնդված սահմանադրության հաջորդ հոդվածում. «ՍՍՀՄ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին։

Ժողովուրդը պետական իշխանությունն իրականացնում է ժողովրդական դեպուտատների սովետների միջոցով, որոնք կազմում են ՍՍՀՄ քաղաքական հիմքը։

Մյուս բոլոր պետական մարմինները ենթակա են ժողովրդական դեպուտատների սովետների վերահսկողությանը և հաշվետու են նրանց»։

Այսպիսով, ՍՍՀՄ նոր սահմանադրությունը ժողովրդին ոչ միայն համարում է իշխանության միակ աղբյուրը, այլ նաև այդ իշխանության միակ լիիրավ սուբյեկտը։ Սովետները հանդես են գալիս ոչ թե որպես իշխանության կրողներ, ինչպես ասված էր ՍՍՀՄ 1936 թ. սահմանադրությունում, այլ որպես ժողովրդին պատկանող իշխանության իրականացման միջոց։ Հետևաբար, առկա է իշխանության ոչ միայն սոցիալական հիմքի ընդլայնման փաստը (ՍՍՀՄ նոր սահմանադրությունը, ի տարբերություն 1936 թ. սահմանադրության, իշխանության աղբյուր է ճանաչում ոչ թե սոսկ աշխատավորներին, այլ սովետական ժողովրդին ամբողջությամբ վերցրած), այլ նաև սկզբունքային նշանակություն ունեցող փոփոխություն է կատարվել ժողովրդաիշխանու-

թյան սահմանադրական ամրապնդման մեջ։ ՍՍՀՄ նոր սահմանադրությունից բխում է, որ ժողովրդին պատկանող իշխանությունը շատ ավելի խորն ու լայն է նրան պատկանող պետական իշխանությունից, առավել ևս այդ իշխանության կենսագործման այնպիսի ներկայացուցչական ձևերից ու միջոցներից, ինչպիսիք են ժողովրդական դեպուտատների սովետները։

Դրա համար էլ, ՍՍՀՄ նոր սահմանադրությունում լիակատար ձևով ամրապնդված են ժողովրդին պատկանող իշխանության կենսագործման ինչպես ներկայացուցչական, այնպես էլ անմիջական ձևերը։ Այսպես, 5-րդ հոդվածում ասվում է, որ «Պետական կյանքի առավել կարևոր հարցերը հանձնվում են համաժողովրդական քննարկման, ինչպես նաև դրվում են համաժողովրդական քվեարկության (հանրաքվեի)»։ Եթե ներկայացուցչական դեմոկրատիայի դեպքում ժողովուրդը իր կամքն արտահայտում է ժողովրդական դեպուտատների սովետների միջոցով և վերջիններս են իրենց ակտերով այդ կամքին տալիս համապարտադիր բնույթ, ապա համաժողովրդական քննարկման ժամանակ ժողովուրդն ինքն է անմիջականորեն արտահայտում իր կամքը։ Համաժողովրդական քվեարկության կամ հանրաքվեի ժամանակ ժողովուրդը ոչ միայն անմիջականորեն արտահայտում է իր կամքը, այլ նաև նույնպիսի անմիջականությամբ, առանց որևէ պետական մարմնի միջնորդության, այդ կամքին տալիս է համապարտադիր բնույթ։

ՍՍՀՄ նոր սահմանադրությունում առաջին անգամ ամրապնդված են սովետական պետության և նրա մարմինների կազմավորման ու գործունեության երկու գլխավոր սկզբունքները՝ դեմոկրատական ցենտրալիզմը և սոցիալիստական օրինականությունը։ Սահմանադրության մեջ տրված է մեր հասարակության կյանքում կոմունիստական կուսակցության ղեկավար և ուղղություն ցույց տվող դերի ծավալուն բնութագիրը։ Եթե 1936 թ. ՍՍՀՄ սահմանադրությունում ՍՄԿԿ դերի մասին խոսվում էր անուղղակիորեն (քաղաքացիների միավորման իրավունքին նվիրված 126-րդ հոդվածում), ապա ՍՍՀՄ նոր սահմանադրությունում այդ հարցին հատուկ հոդված է նվիրված քաղաքական սիստեմին վերաբերվող գլխում։ «Սովետական հասարակության ղեկավար և ուղղություն ցույց տվող ուժը,— ասված է 6-րդ հոդվածում,— նրա քաղաքական սիստեմի, բոլոր պետական և հասարակական կազմակերպությունների միջուկը Սովետական Միության կոմունիստական կուսակցությունն է։ ՍՄԿԿ-ն գոյություն ունի ժողովրդի համար և ծառայում է ժողովրդին»։ Հոդվածը միաժամանակ հստակ սահմանում է պետական իշխանության կենսագործմանը ՍՄԿԿ մասնակցության շրջանակները։ «Բոլոր կուսակցական կազմակերպությունները,— ասված է այնտեղ,— գործում են ՍՍՀՄ սահմանադրության շրջանակներում»։

Հետևողականորեն կենսագործելով ժողովրդաիշխանության սկզբունքը, սահմանադրությունն ամրապնդում է հասարակական կազմակերպությունների մասնակցությունը պետական և հասարակական գործերի կառավարմանը, քաղաքական, տնտեսական և սոցիալ-կուլտուրական հարցերի լուծմանը։ Սահմանադրության մեջ հատուկ հոդված է նվիրված սովետական հասարակության սիստեմում աշխատավորական կոլեկտիվների դերին։ 8-րդ հոդվածը նրանց իրավունք է տալիս մասնակցելու «պետական և հասարակական գործերի քննարկմանն ու լուծմանը, արտադրության և սոցիալական զարգացման պլանավորմանը, կադրերի պատրաստմանն ու տեղաբաշխմանը, ձեռնարկությունը-

ների և հիմնարկների կառավարման, աշխատանքի և կենցաղի պայմանների բարելավման հարցերի, արտադրության զարգացման, ինչպես նաև սոցիալ-կուլտուրական միջոցառումների և նյութական խրախուսման համար նախատեսված միջոցների օգտագործման հարցերի քննարկմանն ու լուծմանը»։

ՍՍՀՄ նոր սահմանադրությունը մեր երկրի քաղաքական սիստեմը ամրապնդում է իր զարգացման մեջ, ցույց է տալիս այդ սիստեմի զարգացման հիմնական ուղղությունը՝ սոցիալիստական դեմոկրատիայի հետագա ծավալումը։

Սահմանադրության հաջորդ գլուխներում ամրապնդված են ժողովրդի իշխանության տնտեսական և սոցիալական հիմքերը։ «ՍՍՀՄ տնտեսական սիստեմի հիմքն է կազմում,—ասված է 10-րդ հոդվածում,— արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը՝ պետական (համաժողովրդական) և կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականության ձևով»։ Սահմանադրությունը սոցիալիստական սեփականության ձև է ճանաչում նաև «արհմիութենական և այլ հասարակական կազմակերպությունների այն գույքը, որը նրանց անհրաժեշտ է կանոնադրական խնդիրների իրականացման համար»։ Դրանով իսկ ՍՍՀՄ նոր սահմանադրությամբ վերացվեց հիմնական օրենքի և ընթացիկ օրենսդրության միջև տեղ գտած հակասությունը։ Բանն այն է, որ մինչև նոր սահմանադրության ընդունումը հասարակական կազմակերպությունների սեփականությունը սոցիալիստական էր ճանաչվում սոսկ ընթացիկ օրենսդրությամբ։

Սահմանադրության 3-րդ գլուխում, որն ամբողջությամբ վերցրած նորույթ է սովետական սահմանադրության զարգացման մեջ, ամրապնդվում է ՍՍՀՄ սոցիալական հիմքը, որը կազմում է բանվորների, գյուղացիների և մտավորականության անխախտ դաշինքը։ Այստեղ սահմանված են սովետական պետության խնդիրները հասարակության սոցիալական միատարրության ուժեղացման, քաղաքի և գյուղի, մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունների վերացման, ՍՍՀՄ բոլոր ազգերի և ազգությունների հետագա զարգացմանն ու մերձեցմանը նպաստելու ասպարեզում։

Սահմանադրությունում նոր հատուկ գլուխներ են հատկացված ՍՍՀՄ արտաքին քաղաքականությանը և սոցիալիստական հայրենիքի պաշտպանությանը։ «Մյուս պետությունների հետ ՍՍՀՄ-ի հարաբերությունները,— ասված է 29-րդ հոդվածում,—կառուցվում են սուվերեն հավասարության, ուժ գործադրելուց կամ ուժով սպառնալուց փոխադարձ հրաժարման, սահմանների անխախտության, պետությունների տերիտորիալ ամբողջականության, վեճերի խաղաղ կարգավորման, ներքին գործերին չմիջամտելու, մարդու իրավունքների և հիմնական ազատությունների հարգման, ժողովուրդների իրավահավասարության և իրենց բախտը տնօրինելու իրավունքի, պետությունների համագործակցության, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներից ու նորմաներից, ՍՍՀՄ-ի կնքած միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքների պահպանման հիման վրա»։

Սահմանադրության՝ իր ծավալով ու բովանդակությամբ խոշոր բաժիններից մեկը նվիրված է անհատի իրավական վիճակի սահմանադրական ամրապնդմանը՝ ՍՍՀՄ քաղաքացիությանը, ՍՍՀՄ քաղաքացիների իրավահավասարությանը, նրանց հիմնական իրավունքներին, ազատություններին և պար-

տականություններին։ «Զարգացած սոցիալիզմի կառուցումը,— ասաց Լ. Ի. Բրեժնևը,— մեզ թույլ է տալիս կատարելագործել հիմնական օրենքի՝ Սովետական Հաղորդիչների իրավունքների վերաբերյալ դրույթները։ «Ցուրաքանչյուրի ազատ զարգացումը բոլորի ազատ զարգացման պայմանն է»՝ «Կոմունիստական մանիֆեստի» այս նշանավոր խոսքերը փաստորեն դարձել են մեր պետության արմատական սկզբունքը»[22]։

Նոր սահմանադրությունն ամենից առաջ ամրապնդում է ՍՍՀՄ քաղաքացիների լիակատար իրավահավասարությունը՝ անկախ ծագումից, սոցիալական և գույքային դրությունից, ազգային և ռասայական պատկանելիությունից, սեռից, կրթությունից, լեզվից, կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքից, զբաղմունքի տեսակից ու բնույթից, բնակության վայրից և այլ հանգամանքներից (հոդ. 34)։

Սահմանադրության 35 և 36-րդ հոդվածներն ամրապնդում են կնոջ և տղամարդու հավասար իրավունքները ՍՍՀՄ-ում, ինչպես նաև ՍՍՀՄ տարբեր ռասաների և ազգությունների իրավահավասարությունը։ Ելնելով սոցիալիստական հումանիզմի սկզբունքից, ՍՍՀՄ սահմանադրությունը օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար երաշխավորում է օրենքով նախատեսված իրավունքներ և ազատություններ, ինչպես նաև ապաստանի իրավունք է վերապահում «այն օտարերկրացիներին, որոնք հետապնդվում են աշխատավորների շահերի և խաղաղության գործի պաշտպանության համար, հեղափոխական և ազգային ազատագրական շարժմանը մասնակցելու համար, հասարակական-քաղաքական, գիտական կամ այլ ստեղծագործական առաջադիմական գործունեության համար» (հոդ. 38)։

ՍՍՀՄ նոր սահմանադրությունն ամենից առաջ ընդլայնում և խորացնում է ՍՍՀՄ քաղաքացիների արդեն իսկ ունեցած հիմնական իրավունքների և ազատությունների բովանդակությունը, դրանք ապահովելով նյութական և իրավական նոր երաշխիքներով։ Այսպես, օրինակ, ամրապնդելով ՍՍՀՄ քաղաքացիների աշխատանքի իրավունքը, ՍՍՀՄ նոր սահմանադրությունը ոչ միայն խորացնում է դրա բովանդակությունը, սահմանելով քաղաքացու իրավունքը իր մասնագիտությունը, զբաղմունքի և աշխատանքի տեսակը ընտրելու իր կոչմանը, ընդունակություններին, պրոֆեսիոնալ պատրաստությանը և կրթությանը համապատասխան, այլ նաև այդ իրավունքի վենսագործումն ապահովում է այնպիսի նյութական նոր երաշխիքներով, ինչպիսիք են ձրի պրոֆեսիոնալ ուսուցումը, աշխատանքային որակավորման բարձրացումը, պրոֆեսիոնալ կողմնորոշման և աշխատանքի տեղավորման սիստեմների զարգացումը (հոդ. 40)։

Սահմանադրությունը ՍՍՀՄ քաղաքացիների կրթության իրավունքը ապահովում է այնպիսի նոր երաշխիքներով, ինչպիսիք են կրթության բոլոր տեսակների անվճար լինելը, երիտասարդության ընդհանուր, պարտադիր միջնակարգ կրթության իրականացումը, կյանքի, արտադրության հետ ուսուցման կապի հիման վրա պրոֆեսիոնալ-տեխնիկական միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության լայն զարգացումը, դպրոցական դասագրքերի ձրի հատկացումը և այլն։

---

22 «Սովետական Հայաստան», 5.VI.1977։

Դրա հետ միասին սահմանադրությունը ՍՍՀՄ քաղաքացիներին տրամադրում է միանգամայն նոր սահմանադրական իրավունքներ և ազատություններ։ Դրանցից են առողջության պահպանման իրավունքը, բնակարանի իրավունքը, կուլտուրայի նվաճումներից օգտվելու իրավունքը, գիտական, տեխնիկական և գեղարվեստական ստեղծագործության ազատությունը, պետական և հասարակական գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքը, պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին նրանց գործունեության պայմանների բարելավման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու և աշխատանքի թերությունները քննադատելու իրավունքը, պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին գանգատներով դիմելու իրավունքը և այլն։

Սահմանադրությունն ամրապնդելով ՍՍՀՄ քաղաքացիների իրավունքների և ազատությունների լիակատարությունը՝ միաժամանակ սահմանում է, որ «իրավունքների և ազատությունների իրականացումն անբաժանելի է քաղաքացու կողմից իր պարտականությունների կատարումից» (հոդ. 59)։ Երկրի հիմնական օրենքում ասված է, որ «Քաղաքացիների կողմից իրավունքների և ազատությունների օգտագործումը չպետք է վնաս հասցնի հասարակության և պետության շահերին և մյուս քաղաքացիների իրավունքներին» (հոդ. 39)։

Սովետական պետության թշնամիներն իրենց քննադատության կրակը կենտրոնացրել են մեր սահմանադրության այս կարևոր դրույթների վրա։ «Մեր «քննադատները»,— ասաց Լ. Ի. Բրեժնևը,— ձևացնում են, թե իբր իրենք չգիտեն, որ իրենց դժգոհությունը հարուցած սահմանադրության նախագծի դրույթները լրիվ համապատասխանում են միջազգային կարևորագույն փաստաթղթերին։ Հիշեցնենք նրանց։ ՄԱԿ-ի ընդունած մարդու իրավունքների ընդհանուր դեկլարացիայում միանգամայն պարզորոշ ասվում է, որ «ամեն մի մարդ պարտականություններ ունի հասարակության հանդեպ, որտեղ և միայն հնարավոր է նրա անձի ազատ ու լիակատար զարգացումը», և որ քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրականացումը պահանջում է «ուրիշների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչում ու հարգում և դեմոկրատական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի և ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջների բավարարում»։ Սա է դեմոկրատական հասարակական կյանքի հանրաճանաչ սկզբունքը։ Ուրիշ ոչինչ էլ, պարոնայք քննադատներ, չի բովանդակվում ՍՍՀՄ նոր սահմանադրության այն դրույթների մեջ, որոնք առաջացնում են ձեր երեսպաշտական զայրույթը»[23]։

ՍՍՀՄ նոր սահմանադրությունը ոչ միայն ընդլայնում է ՍՍՀՄ քաղաքացիների արդեն իսկ ունեցած հիմնական պարտականությունների բովանդակությունը, այլև նրանց վրա դնում է այնպիսի նոր պարտականություններ, ինչպիսիք են մյուս քաղաքացիների ազգային արժանապատվությունը հարգելը և սովետական բազմազգ պետության ազգերի ու ազգությունների բարեկամության ամրապնդմանը նպաստելը, հարգանքը ուրիշ անձանց իրավունքների և օրինական շահերի նկատմամբ, անհաշտ վերաբերմունքը հա-

23 Նույն տեղում, 5.X.1977։

կահասարակական արարքների նկատմամբ, հոգատարությունը բնության և նրա հարստությունների հանդեպ և այլն։

Սահմանադրության կարևոր բաժիններից մեկը նվիրված է ՍՍՀՄ ազգային-պետական կառուցվածքին։ Այստեղ տրված է ՍՍՀՄ՝ որպես միութենական բազմազգ պետության, նոր բնորոշումը (հոդ. 70), սահմանված են ՍՍՀՄ բացառիկ լիազորությունները (հոդ. 73), տրված է միութենական հանրապետության հասկացությունը (հոդ. 76), գլուխներ են հատկացված ինքնավար հանրապետությանը, ինքնավար մարզին և ինքնավար օկրուգին։ Անդրադառնալով սահմանադրության այս բաժնին, Լ. Ի. Բրեժնևը նշեց. «Փորձը ցույց է ավել, որ ՍՍՀՄ ֆեդերատիվ կառուցվածքի հիմնական գծերն իրենց լիովին արդարացրել են։ Ուստի հարկ չկա որևէ սկզբունքային փոփոխություն մտցնելու սովետական սոցիալիստական ֆեդերացիայի ձևերի մեջ»[24]։

Սահմանադրության կողմից ՍՍՀՄ ազգային-պետական կառուցվածքի հարցերի լուծումը մի կողմից լիովին ապահովում է մեր բազմազգ պետության ընդհանուր շահերի և այն կազմող միութենական հանրապետությունների յուրաքանչյուրի շահերի զուգակցումը, մյուս կողմից՝ մեր երկրի բոլոր ազգերի և ազգությունների համակողմանի զարգացումը և մերձեցումը։

Սահմանադրությունում հատուկ բաժին է առանձնացվել ժողովրդական դեպուտատների սովետների բոլոր օղակների հետ կապված ընդհանուր հարցերի լուծման համար։ Մեկ տարով երկարաձգվել է (4-ից 5-ի) ՍՍՀՄ Գերագույն սովետի և միութենական ու ինքնավար հանրապետությունների գերագույն սովետների լիազորության ժամկետը, իսկ ժողովրդական դեպուտատների տեղական սովետների ժամկետը 2 տարուց երկարաձգվել է երկուսուկեսի։ Սահմանադրության այս բաժնում տրված է ժողովրդական դեպուտատների սովետների բոլոր օղակների իրավասության ընդհանուր բնութագիրը, ամրապնդված են նրանց գործունեության դեմոկրատական ձևերը և մեթոդները։ 94-րդ հոդվածում ասված է, որ «Ժողովրդական դեպուտատների սովետների գործունեությունը կառուցվում է հարցերի կոլեկտիվ, ազատ, գործարար քննարկման և լուծման, հրապարակայնության, սովետների և բնակչության առջև գործադիր ու կարգադրիչ մարմինների, սովետների կողմից ստեղծվող մյուս մարմինների կանոնավոր հաշվետվության, նրանց աշխատանքին քաղաքացիներին լայնորեն մասնակից դարձնելու վրա։ Ժողովրդական դեպուտատների սովետները և նրանց կողմից ստեղծվող մարմինները բնակչությանը սիստեմատիկաբար տեղյակ են պահում իրենց աշխատանքի և ընդունած որոշումների մասին»։

Այս բաժնի 13-րդ գլուխը նվիրված է ընտրական սիստեմին։ Սահմանադրությունը մեկ միասնական տարիք (18 տարեկան) է սահմանում ժողովրդական դեպուտատների սովետների բոլոր օղակներում ընտրելու և ընտրվելու իրավունքի համար, բացառությամբ ՍՍՀՄ Գերագույն սովետի, որտեղ ընտրվելու համար սահմանում է 21 տարեկան։ Այստեղ ամրապնդված են սովետական ընտրական իրավունքի հիմնական սկզբունքները՝ գաղտնի քվեարկությամբ ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրություններ։

---

24 Նույն տեղում, 5.VI.1977։

Այս բաժնում հատուկ գլուխ է հատկացված ժողովրդական դեպուտատի իրավական վիճակին և նրա գործունեությանը։ Այստեղ իրենց սահմանադրական ամրապնդումն են ստացել 1972 թ. սեպտեմբերի 20-ի՝ «ՍՍՀՄ-ում աշխատավորների դեպուտատների սովետների դեպուտատների ստատուսի մասին» օրենքի կարևոր շատ դրույթներ։ 103-րդ հոդվածը սահմանում է, որ «դեպուտատները ժողովրդի լիազոր ներկայացուցիչներն են ժողովրդական դեպուտատների սովետներում։ Մասնակցելով սովետների աշխատանքին, դեպուտատները լուծում են պետական, տնտեսական և սոցիալ-կուլտուրական շինարարության հարցերը, կազմակերպում սովետների որոշումների կենսագործումը, վերահսկողություն իրականացնում պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների աշխատանքի նկատմամբ։ Իր գործունեության մեջ դեպուտատը ղեկավարվում է համապետական շահերով, հաշվի է առնում ընտրական օկրուգի բնակչության պահանջները, հետամուտ լինում ընտրողների պատվիրանների կենսագործմանը»։

Սահմանադրությունը դեպուտատից պահանջում է «իր աշխատանքի և սովետի աշխատանքի մասին հաշվետու լինել ընտրողների առջև, ինչպես նաև իրեն դեպուտատության թեկնածու առաջադրած կոլեկտիվների և հասարակական կազմակերպությունների առջև»։ Սահմանադրությունում ասված է, որ «ընտրողների վստահությունը չարդարացրած դեպուտատը ցանկացած ժամանակ կարող է ետ կանչվել ընտրողների մեծամասնության որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով»։

Սահմանադրության հաջորդ բաժինը նվիրված է ՍՍՀՄ պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմիններին՝ ՍՍՀՄ Գերագույն սովետին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին։ Այս բաժնի 108-րդ հոդվածը ամրապնդում է ՍՍՀՄ Գերագույն սովետի լիիշխանությունը՝ գերագույնությունը։ «ՍՍՀՄ Գերագույն սովետը,— ասված է հոդվածում,— իրավազոր է վճռելու սույն սահմանադրությամբ ՍՍՀ Միության տնօրինությանը վերապահված բոլոր հարցերը»։ Նման հարցադրումը որոշակիություն է մտցնում ՍՍՀՄ պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմինների իրավական հարաբերությունների միջև։

Սահմանադրությունը միաժամանակ ամրապնդում է ՍՍՀՄ Գերագույն սովետի բացառիկ լիազորությունները։ Նույն հոդվածում ասված է, որ «ՍՍՀՄ սահմանադրության ընդունումը, նրա մեջ փոփոխություններ մտցնելը, ՍՍՀՄ կազմի մեջ նոր հանրապետությունների ընդունումը, նոր ինքնավար հանրապետությունների և ինքնավար մարզերի կազմման հաստատումը, ՍՍՀՄ տնտեսական և սոցիալական զարգացման պետական պլանների, ՍՍՀՄ պետական բյուջեի և դրանց կատարման հաշվետվությունների հաստատումը, իրեն հաշվետու՝ ՍՍՀ Միության մարմինների կազմումը իրականացվում է բացառապես ՍՍՀՄ Գերագույն սովետի կողմից»։

110-րդ հոդվածը փոփոխություններ է մտցնում ՍՍՀՄ Գերագույն սովետի Միության սովետի ընտրության ներկայացուցչական նորմերի մեջ։ Այժմ «Միության սովետն ընտրվում է ըստ հավասար թվով բնակչություն ունեցող ընտրական օկրուգների»։ Սահմանադրության 113-րդ հոդվածը ՍՍՀՄ Գերագույն սովետում օրենսդրական նախաձեռնության իրավունք է տրամադրում «Միության սովետին, Ազգությունների սովետին, ՍՍՀՄ Գերագույն սո-

վետի նախագահությանը, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին, միութենական հանրապետություններին՝ ի դեմս նրանց պետական իշխանության բարձրագույն մարմինների, ՍՍՀՄ Գերագույն սովետի հանձնաժողովներին և նրա պալատների մշտական հանձնաժողովներին, ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատներին, ՍՍՀՄ գերագույն դատարանին, ՍՍՀՄ գլխավոր դատախազին»։ Հետևողականորեն կենսագործելով ժողովրդաիշխանության սկզբունքը, սահմանադրությունն օրենսդրական նախաձեռնության իրավունք է տրամադրում նաև հասարակական կազմակերպություններին՝ ի դեմս իրենց ընդհանուր միութենական մարմինների։

Սահմանադրությունն ամրապնդում է ՍՍՀՄ օրենքների ընդունման երկու հիմնական եղանակ։ Օրենքներն ընդունվում են կա՛մ ՍՍՀՄ Գերագույն սովետի կողմից, կա՛մ էլ համաժողովրդական քվեարկությամբ՝ հանրաքվեով։ Սահմանադրության 120-րդ հոդվածը փոփոխություն է մտցնում ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության կազմում՝ սահմանելով ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահի առաջին տեղակալի պաշտոն։

Երկրի նոր հիմնական օրենքը զգալի փոփոխություններ է մտցնում Գերագույն սովետի նախագահության իրավասության մեջ։ Մասնավորապես պետական իշխանության այդ բարձրագույն մարմնին իրավունք է վերապահվում Գերագույն սովետի նստաշրջանների միջև ընկած ժամանակամիջոցում անհրաժեշտության դեպքում փոփոխություններ մտցնելու ՍՍՀՄ գործող օրենսդրական ակտերի մեջ, հաստատել միութենական հանրապետությունների միջև սահմանների փոփոխությունները, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի առաջարկությամբ կազմել և վերացնել ՍՍՀՄ մինիստրություններն ու ՍՍՀՄ պետական կոմիտեները։

Բազմաթիվ նոր դրույթներ է պարունակում սահմանադրության 16-րդ գլուխը, որն ամբողջովին նվիրված է ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին։ Այստեղ ընդգծված է ՍՍՀՄ կառավարության հաշվետու և պատասխանատու լինելը ՍՍՀՄ Գերագույն սովետի և նրա նախագահության առջև, տրված է ՍՍՀՄ պետական իշխանության այդ բարձրագույն գործադիր և կարգադրիչ մարմնի իրավական վիճակի սահմանադրական բնութագիրը։

Սահմանադրության հաջորդ՝ VI բաժինը նվիրված է միութենական հանրապետությունների պետական իշխանության և կառավարման մարմինների կառուցման հիմունքներին։ Այն կարևոր դրույթներ է պարունակում միութենական և ինքնավար հանրապետությունների գերագույն սովետների բացառիկ լիազորությունների, ինքնավար հանրապետության տերիտորիալ գերիշխանության իրավունքի, ժողովրդական դեպուտատների տեղական սովետների նոր իրավունքների մասին և այլն։ 147-րդ հոդվածում ասվում է, որ «Իրենց լիազորությունների շրջանակներում ժողովրդական դեպուտատների տեղական սովետներն ապահովում են տնտեսական և սոցիալական կոմպլեքսային զարգացումն իրենց տերիտորիայում, վերահսկողություն են իրականացնում այդ տերիտորիայում գտնվող վերադաս ենթակայության ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների կողմից օրենսդրության պահպանման նկատմամբ, կոորդինացնում և վերահսկում են նրանց գործունեությունը հողօգտագործման, բնության պահպանության, շինարարության, աշխատանքային ռեսուրսների օգտագործման, ժողովրդական սպառման ապ-

բանքների արտադրության, բնակչության սոցիալ-կուլտուրական, կենցաղային և այլ սպասարկման բնագավառում»։

Սահմանադրության վերջին երեք բաժինները նվիրված են արդարադատությանը, արբիտրաժին և դատախազական հսկողությանը, ինչպես նաև ՍՍՀՄ գերբի, դրոշակի նկարագրությանը, հիմնի և մայրաքաղաքի սահմանմանը ու ՍՍՀՄ սահմանադրության գործողության և նրա փոփոխման կարգին։

Դժվար է գերագնահատել այն հսկայական նշանակությունը, որ ունի ՍՍՀՄ նոր սահմանադրության ընդունումը մեր երկրի կյանքում։ «Նրա դրույթների իրականացումը,— ասաց Լ. Ի. Բրեժնևը,— պետք է որակապես նոր մակարդակի բարձրացնի մեր պետական և տնտեսական գործունեությունը, իշխանության և կառավարման մարմինների ամբողջ աշխատանքը»[25]։ Եվ ինչպես նշվեց ՍՍՀՄ Գերագույն սովետի 9-րդ գումարման 7-րդ արտահերթ սեսիայում, ՍՍՀՄ նոր սահմանադրությունը «սովետական պետության ամբողջ 60-ամյա զարգացման խտացված արդյունքն է»[26]։

ОСНОВНОЙ ЗАКОН РАЗВИТОГО СОЦИАЛИЗМА

ВЛАДИМИР НАЗАРЯН

Резюме

Сравнительный анализ Конституции СССР 1977 г. с Конституцией СССР 1936 г. раскрывает то новое, что вносит Основной закон общенародного государства в механизм правового регулирования общественных отношений развитого социализма. Являясь органическим элементом политической системы зрелого социализма и представляя собой концентрированный итог шестидесятилетнего развития социалистического государства, новая Конституция СССР закрепляет достижения советского народа в важнейших сферах экономической, политической и социально-культурной жизни. Охватывая весь комплекс общественных отношений зрелого социализма в их динамике, новая Конституция СССР является программным документом строительства коммунизма.

---

25 Նույն տեղում, 4.VI.1977։

26 Նույն տեղում, 9.X.1977։